# ՀՐԱՀԱՆԳ

## 1934 Թ. ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

*1934 թ. բերքի դրությունը գիտելու համար սահմանվում է հետևյալ կարգը.*

*1. Սովխոզների, կոլխոզների և անհատական սեկտորի բերքի դրության գնահատականը յուրաքանչյուր կուլտուրայի համար տրվում է 3 ժամկետում։* Ամեն մի կուլտուրայի վերաբերյալ առաջին ժամկետի գնահատականը տրվում է բալով, իսկ մնացած երկու ժամկետներինը՝ ցենտներով։ *Գնահատումների այս ձևը պետք է ճիշտ պահպանել։*

2. Բալերով գնահատականը տրվում է հինգբալյան սիստեմով։ Ցանքսի դրությունը բալերով արտահայտվում է հետևյալ ձևով, 5—շատ լավ դրություն, 4—լավ դրություն, 3—միջակ դրություն, 2—ը միջակից ցածր դրություն և 1—ը վատ դրություն։

*3. Ցանքսերի (խոտհարքների) բերքատվության գնահատման ժամանակ պետք է նկատի առնել, որ յուրաքանչյուր հաշվետու ժամկետի համար տեղեկությունները (բալերով կամ ցենտներով) պետք է վերաբերվեն ցանքսի նույն տարածության, այն է՝*

*ա) Աշնանացան հացահատիկների համար, գնահատականներ պետք է տալ աշնանը ցանված տարածությանը, դուրս գալով դրանից ձմեռվա ընթացքում ցրտահարության հետևանքով փչացած տարածությունը։*

*Գարնանացան հացահատիկների համար գնահատականներ տրվում է գարնանը ցանված ամբողջ տարածության վերաբերյալ։*

*Օրինակ, կոլխոզում աշնանը ցանված էր աշնանացան ցորեն 2000 հեկտար, որից ձմեռվա ընթացքում, համաձայն կազ-*

Արխիվ

մած արձանագրությունների, փչացել և 100 հեկտար: Այս պայմաններում համաձայն վերոհիշյալ, ինչպես բալային գնահատականները (1-ին ժամկետի համար), նույնպես և մեկ հեկտարից ստացվելիք բերքը (վերջին յերկու ժամկետների համար) պետք է վորոշվեն 1900 հեկտարի վերաբերյալ, չնայած հետագայում 1900 հեկտարից վորոշ մասը փչացել է ամառային անբարենպաստ պայմանների հետևանքով (որինակ կարկտահարությունից, վնասատուներից, յերաշտից և այլն):

Գարնան ցանքսերի վերաբերյալ գնահատումները տալ ամբողջ տարածության համար, առանց դուրս գալու ամառվա ընթացքում փչացած տարածությունները:

Աշնանացանից փչացած պետք է համարել՝

ա) Աշնանացանի այն տարածությունները, վորոնք փաստորեն վերացանվել են և վորոնք յենթակա չեն վերացանման:

բ) Աշնանացանի փչացած այն տարածությունները, վորոնք ոգտագործվում են վոչ ուղղակի նպատակի համար (որինակ գնում են իբրև կեր անասունների համար):

Աշնանացանի ձմեռվա ընթացքում փչացած տարածությունների չափը վորոշվում է կոլխոզի նախագահի, գյուղխորհրդի նախագահի (անհատական սեկտորի վերաբերյալ) և սովխոզի դիրեկտորի անձնական պատասխանատվությամբ:

Նախորդ տարիներում ցանված բազմամյա խոտերի գնահատականները պետք է վերաբերվեն այն տարածությանը, վորից ընթացիկ տարում պետք է խոտ հնձվի, իսկ բնական խոտհարքների վերաբերյալ՝ գնահատականները տրվում են պլանով նախատեսված խոտհարքի տարածությանը:

Այսպիսով հաշվետու բոլոր ժամկետների տեղեկագրերի մեջ ցանքսերի (խոտհարքների) տարածությունները պետք է մնան անփոփոխ:

4. Պտղատու այգիների բերքատվությունը վորոշելիս պետք է վորոշել պտղաբեր հասակ ունեցող մեկ ծառի (թփի) միջին բերքը, իսկ ընդհանուր արտադրանքը վորոշել բոլոր պտղաբեր հասակ ունեցող ծառերի (թփերի) հաշվով:

Խաղողի այգիների բերքը վորոշվում է պտղատու հասակ ունեցող այգիների տարածության վերաբերյալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Պտղատու հասակ — հաշվվում է այն հասակը, վորի ժամանակ տվյալ տնկակը սովորաբար պտուղ է



29 JAN 2018

տալիս:

5. Բերքատվությունը վորոշելու ժամկետները հետևյալներն են՝

| Աշնան ցանքսեր և վաղ գարնան ցանքսեր ցորեն, գարի, տարեկան, հաճար, վարսակ | Ընդեղեններ, վիկա հատիկի, սորգո, կորեկ և չալթուկ | Յեգիպտացորեն, (արևածաղիկ) | Տեխնիկական կուլտուրաներ, բանջարաբոստանային բույսեր, պտղատու այգիներ և խաղողի այգիներ | խոտհարքներ |
|---|---|---|---|---|
| 1/VI բալով 15/VI և 15/VII ցենտներով | 15/VI բալով 15/VII և 15/VIII ցենտներով | 15/VII բալով 15/VIII և 15/IX ցենտներով | 1/IX ցենտներով բոլորի և տեխնիկ. կուլտուրաների համար, իսկ բամբակի, վուշի (քթի), շաքարի ճակնդեղի, ծխախոտի, կարտոֆիլի բացի այդ նաև 1/VIII-ին յերկու ժամկետներին էլ կշռային արտահայտությամբ: | 1/VI ցենտներով |

6. Ցանքսերի (խոտերի և այլն) դրության գնահատում կատարվում է՝

ա) Կոլխոզում — անձամբ կոլխոզի նախագահի կողմից՝ իր անձնական դիտողության և բրիգադիրների տված տեղեկությունների հիման վրա, ընդ վորում գնահատվում են միայն կոլխոզի համայնացված ցանքսերը:

բ) Անհատական սեկտորի վերաբերյալ (միանձնատնտեսների և կոլխոզնիկների անհատական ցանքսերի) գյուղխորհրդի նախագահի կողմից՝ իր անձնական դիտողության և լիազորների տված տեղեկությունների հիման վրա:

գ) Բոլոր սիստեմի սովխոզների վերաբերյալ — սովխոզների դիրեկտորների կողմից՝ բաժինների, գյուղատնտեսական անձնակազմի և իր անձնական դիտողության հիման վրա:

Սովխոզի դիրեկտորը, կոլխոզի նախագահը և գյուղխորհրդի նախագահը անձնական պատասխանատվություն են կրում ինչպես իրենց կողմից հաղորդած գնահատականների ճշտության, նույնպես և սահմանված ժամկետներին բերքատվության մասին հաշվետվություն ներկայացնելու համար:

7. Բերքի դրության վերաբերյալ հաշվետվությունները պետք է ներկայացնել համաձայն այդ առթիվ սահմանված ձևերի, վորոնք ուղարկվում են տեղերին (շրջաններ, գյուղեր, կոլխոզներ և այլն):

8. Կազմված հաշվետվությունները պետք է նույն որը (այսինքն ամսի 1 և 15-ին) ուղարկվեն՝

ա) Հողժողկոմատի· շաքարի ճակնդեղի տրեստի և սովխոզ ժողկոմատի սիստեմում գտնվող սովխոզները՝ իրենց տրեստների վարչություններին և բերքատվությունը վորոշող հանրապետական հանձնաժողովի նախագահին: Մյուս սիստեմներում գտնվող սովխոզները, կոոպխոզները, «ՈՐՍ»-երը և այլն բերքատվության դրության վերաբերյալ հաշվետվությունները սահմանված ժամկետներին ներկայացնում են իրենց կենտրոններին, իսկ վերջին ժամկետին կուլտուրաների մի մասի (հացահատիկների) և արևածաղկի մասին նաև բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին:

բ) Կոլխոզները— ներկայացնում են գյուղխորհրդներին, իսկ ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլխոզները բացի դրանից նաև ՄՏԿ-ին:

գ) Գյուղխորհրդի նախագահները՝ շրջհողբաժիններին:

Այս դեպքում գյուղխորհրդի նախագահը հողբաժնին ներկայացնում է հաշվետվություն միայն անհատական սեկտորի վերաբերյալ (ներառյալ կոլխոզների անհատական ցանքսերը):

Գյուղխորհրդի նախագահը կոլխոզների վերաբերյալ վոչ մի հաշվետվություն չի կազմում, այլ ամսի 2-ից և 17-ից վոչ ուշ հողբաժնին է ուղարկում իր կողմից կոլխոզներից ստացված հաշվետվությունները՝ նախապես դրանք ստուգելուց հետո:

Յեթե Գ/Խ. նախագահը հայտնաբերում է վոչ ճիշտ գնահատականներ, նա պարտավոր է այդ նույն բլանկի վրա տեղավորել իր յեզրակացությունը, սակայն առանց ուղղելու կոլխոզի տված գնահատականը:

9. ՄՏԿ-ի դիրեկտորը պետք է մանրամասը ստուգի յուրաքանչյուր կոլխոզի հաշվետվությունն, ուղղի վոչ ճիշտ գնահատականները և կոլխոզի գնահատականների մեջ կատարված ամեն մի ուղղման բացատրությունը հաստատի իր ստորագրությամբ:

Կոլխոզների հաշվետվությունները, այդ հաշվետվությունների ամփոփման տեղեկագրերի հետ միասին ՄՏԿ-ի կողմից, ամսի 2-ից և 17-ից վոչ ուշ, հանձնվում են շրջհողբաժնին: ՄՏԿ-ի դիրեկտորը միաժամանակ հեռագրով հայտնում է Հողժողկոմատին հացահատիկային կուլտուրաների բերքատվության տեղեկությունները: ՄՏԿ-ի դիրեկտորը անձնապես պատասխանատու յե հողբաժնին և Հողժողկոմատին ներկայացրած կոլխոզների վոչ ճիշտ տեղեկությունների համար

10. Հողժողկոմատի սիստեմում գտնվող տրեստների հանրա-



ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
11·2788/91

պետական վարչությունները, ամսի 4-ից և 19-ից վոչ ուշ, տեղեկությունն ուղարկում են իրենց միութենական կենտրոնին, իսկ պատճենը հանրապետական հողժողկոմատին, ԺՏՀՎ-ին և բերքատվությունը վորոշող հանրապետական հանձնաժողովի նախագահին:

Այլ սիստեմում գտնվող տրեստների դիրեկցիաները նույն ժամկետներին տեղեկագրերն ուղարկում են համապատասխան ժողկոմատների (Սովխոզ ժողկոմատ, Մատժողկոմատ և այլն) արտադրական վարչություններին և պատճենները հանրապետական ԺՏՀՎ-ին բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին:

II Շրջհողբաժնի պարտականությունները բերքի դրությունը դիտելու համար:

1. Շրջհողբաժինը պարտավոր է բերքի դրությունը դիտելու կարգի մասին բլանկներն ու հրահանգներն ստանալուց անմիջապես հրահանգ տա ՀԺԿ-ի սիստեմում գտնվող սովխոզներին, ՄՏԿ-ին, կոլխոզներին և գյուղխորհուրդներին:

Դրա համար շրջհողբաժինը՝

ա) Հրավիրում է ՄՏԿ-ի և սովխոզների բերքատվության վրա դիտողություն կատարող գյուղատնտեսների հատուկ խորհրդակցություն և նրանց ու սովխոզների և ՄՏԿ-ի դիրեկտորների հետ միասին և սովխոզների ՄՏԿ-ի ու վիճակագիրների մասնակցությամբ մշակում հրահանգով սահմանված կարգը՝ բերքի դրությունը գնահատելու համար:

բ) Հրավիրում է գյուղխորհուրդների նախագահների ու քարտուղարների և ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլխոզների նախագահների և հաշվետարների թփային (КУСТОВЫН) խորհրդակցություններ և այդ խորհրդակցություններում ՄՏԿ-ի գյուղատնտեսների և շրջհողբաժնի աշխատակիցների միջոցով հրահանգում նրանց 1934 թ. բերքի դրության գնահատման կարգի մասին

Այս հրահանգչական խորհրդակցությունները բոլոր շրջհողբաժինները պետք է անցկացնեն գյուղխորհուրդների և ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլխոզների վերաբերյալ, իսկ ՄՏԿ-ը իրենց կողմից սպասարկվող կոլխոզների վերաբերյալ—բերքի դրությունը դիտելուց առաջ՝ բերքատվության պետական հանձնաժողովի մասնակցությամբ և նրա ղեկավարությամբ:

2. Շրջհողբաժիններն այնուհետև պետք է խիստ հետևեն, վորպեսզի, յուրաքանչյուր հաշվետու ժամկետի վերաբերյալ հաշվետվություններ ստացվեն անպայման բոլոր ՄՏԿ-ներից, գյուղխորհուրդներից և կոլխոզներից: Հաշվետվություն չներկայացնող անձանց վրա անհապաղ պետք է տուժ սահմանել:

Այդ անձանց մասին պետք է տեղեկացնել բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին։ Շրջհողբաժինն էլ ավելի մեծ խստությամբ պետք է հսկի հաշվետվության վորակի վրա, թե տրված տեղեկությունը վորքանով է համապատասխանում բերքի իսկական դրությանը։

Այդ նպատակով հաշվառման տեսուչը, շրջգյուղատնտեսը և ինքը հողբաժնի վարիչը պետք է տեղում սիստեմատիկ կերպով ստուգեն կոլխոզի և գյուղխորհրդի աշխատանքները՝ բերքատվության գնահատականները վորոշելու գործում։ Բերքատվության վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու այլ և սխալ տեղեկություններ տալու դեպքում, հանցավորները պետք է յենթարկվեն պատասխանատվության ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի 1933 թ. մարտի 5-ի և 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման հիման վրա։

3. Շրջհողբաժինը, անհատական սեկտորի և ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլխոզների հաշվետվությունները գյուղխորհրդներից ստանալուց, առանց ուշացնելու անցնում է նրանց ստուգմանը։ Ստուգումը պետք է կատարվի անմիջականորեն շրջհողբաժնի վարիչի կամ նրա տեղակալի կողմից՝ գյուղատնտեսի և հաշվառման տեսչի մասնակցությամբ։ ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլխոզների հաշվետվությունները ստուգվում են անմիջականորեն ՄՏԿ-ի դիրեկտորի կողմից և շրջհողբաժինը այդ կոլխոզների հաշվետվությունների մեջ վոչ մի ուղղում չի մտցնում։

4. Յեթե ստուգման ժամանակ շրջհողբաժինը ուղղում է կոլխոզի կամ գյուղխորհրդի այս կամ այն գնահատականը, ապա այդ ուղղումը կատարվում է իր իսկ հաշվետու բլանկի վրա՝ նոր թիվը ուղղվող թվի վերևից գրելու միջոցով։ Ուղղված թիվը չի վոչնչացվում, այլ միայն նրա վրայից գիծ է քաշվում, բայց այնպես, վոր այնուամենայնիվ այդ թիվը կարելի լինի կարդալ։

5 Բոլոր հաշվետվություններն ստուգելուց և ուղղումներ մտցնելուց հետո շրջհողբաժինը ընդունած գնահատականների հիման վրա կազմում է հաշվետվության հանրագումարային ամփոփում ամբողջ շրջանի վերաբերյալ—հետևյալ ձևով

ա) Բոլոր կոլխոզների վերաբերյալ առանձին, անկախ նրանից թե սպասարկվում է նա ՄՏԿ-ի կողմից թե վոչ։

բ) Անհատական սեկտորի վերաբերյալ առանձին։

6. Բալային գնահատականների ամփոփված հաշվետվությունը (առաջին ժամկետի համար) կազմվում է յուրաքանչյուր կատեգորիայի տնտեսությունների վերաբերյալ (կոլխոզներ, անհատական սեկտոր) միջին կշռային բալերը դուրս բերելու ճանապարհով։

ՈՐԻՆԱԿ տվյալ կատեգորիայի տնտեսությունների վերաբերյալ (վերոհիշյալներից մեկի) տվյալ կուլտուրայի բալային գնահատականները կազմում են՝ «5» 3500 հեկտ. տարածության վերաբերյալ, «4»-ը 2000 հեկտարի, «3»-ը 1500 հեկտարի, «2»-ը 500 հեկտարի վերաբերյալ։ Այս դեպքում 5-ը պետք է բազմապատկել 3500-ով =17500, 4×2000=8000, 3×1500=4500 և 2×500=1000։ Ստացված արտադրյալները պետք է գումարել իրար հետ և դրանից ստացված գումարը՝ 31000 պետք է բաժանել տարածությունների գումարի՝ 7500 վրա։ Բաժանումից ստացած 4,1 թիվը կլինի միջին կշռային բալային գնահատականը տվյալ կուլտուրայի համար, տվյալ կատեգորիայի տնտեսությունների վերաբերյալ։

7. Ցենտներով գնահատման հաշվետվությունների ամփոփումը (վերջին յերկու ժամկետների համար) նույնպես կազմվում է յուրաքանչյուր կատեգորիայի տնտեսությունների վերաբերյալ (կոլխոզներ և անհատական սեկտոր)՝ ցանքսերի տարածությունների և յուրաքանչյուր առանձին կուլտուրայի ընդհանուր արտադրանքի հաշվետվության տվյալների ամփոփման միջոցով։ Ամփոփված հաշվետվության մեջ մեկ հեկտարի բերքը ստացվում է յուրաքանչյուր կուլտուրայի ընդհանուր արտադրանքը այդ նույն կուլտուրայի ցանքսի տարածության վրա բաժանելով։

8. Կոլխոզների և անհատական սեկտորի բոլոր կուլտուրաների վերաբերյալ բերքատվության հաշվետվությունը ամսի 5 և 20-ից վոչ ուշ շտապ փոստով պետք է ուղարկվեն Հողժողկոմատին, իսկ հացահատիկային կուլտուրաների և արևածաղկի բերքատվության մասին նաև բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կոլխոզների կողմից ներկայացրած հաշվետվությունները՝ հողբաժնի յեվ ՄՏԿ-ի կողմից մտցված ուղղումներով ուղարկվում են բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին՝ նրա առաջին իսկ պահանջի դեպքում։

9. Շրջհողբաժինը պարտավոր է նույն օրը Հողժողկոմատին ուղարկել հեռագրական տեղեկագիր գլխավոր հացահատիկների, արևածաղկի և տեխնիկական կուլտուրաների բերքի դրության գնահատականների մասին, յուրաքանչյուր կուլտուրայի և յուրաքանչյուր սեկտորի համար առանձին։ Բոլոր սիստեմի սովխոզները տեղեկագրեր ներկայացնում են իրենց տրեստներին,

Հեռագրական տեղեկագրերը պետք է տրվեն այս ձևով.

Հողբաժնի, ՄՏԿ-ի և սովխոզի հեռագրերը.

Հեռագրի մեջ ցույց է տրվում բերքի դրության գնահատականը՝ բալերով կամ ցենտներով, ընդ վորում շնորհիվ նրան, վոր միևնույն հեռագրի մեջ տարբեր կուլտուրաների բերքը կարող է տրվի և բալերով և ցենտներով, [illegible] հեռագրի մեջ անպայման պետք է անել անհրաժեշտ ցուց[illegible]ներով» ընդ վորում այս բանավոր ցույ[illegible]ն յու-





ՀՀ Ազգային գրադարան
NL0936498

-20- 1934թ.- 429
II
27881

րաքանչյուր առանձին կուլտուրայից առ[illegible] գնահատականով տրվող կուլտուրաների [illegible] տվության բալային և ցենտներով գնահատ[illegible] տասնորդական նշանով։

Շրջհողբաժինը տեղեկությունը տալիս է կոլխոզների և անհատական տնտեսությունների (ներառյալ և կոլխոզնիկների անհատական ցանքերի) բերքի դրության վերաբերյալ և հեռագիրը կազմելուց առաջին թվով պետք է արտահայտի կոլխոզների բերքի գնահատականը, իսկ յերկրորդ թվով անհատական սեկտորինը։

Հեռագրի ձևը՝

1. հունիսի բալերով աշնանացան՝ ցորեն 50 45 գարի 45 40 գարնանացան ցորեն 45 35 գարի 50 45 հաճար 40 25։ Սա հասկացվում է այսպես՝ աշնանացան ցորեն կոլխոզում 5 անհատներում 4,5 գարի կոլխոզում 4,5 անհատներում 4, գարնանացան ցորեն կոլխոզում 4,5 անհատներում 3,5 և այլն։ Այսպիսով տասնորդական մասերը հեռագրի մեջ արտահայտվում են ինչպես ամբողջ թվեր, վորովհետև ստորակետը հեռագրի մեջ չի դրվում։

Հետագա ժամկետներին, յերբ վորոշ կուլտուրաների գնահատականներ (յերկրորդ և յերրորդ ժամկետի վերաբերող) տրվելու յեն ցենտներով, իսկ մի շարք կուլտուրաների գնահատականներ (առաջին ժամկետի վերաբերող) տրվելու յեն բալերով հեռագիրն ստանալու է հետևյալ արտահայտությունը։

15 հուլիսի ցենտներով աշնանացան՝ ցորեն 100 95 գարի 120 105 գարնանացան՝ ցորեն 95 87 գարի 125 110 և այլն բալով՝ յեգիպտացորեն 50 43 արևածաղիկ 45 40 և այլն։

Սա նշանակում է աշնանացան՝ ցորեն կոլխոզում 10.0 ցենտներ անհատներում 9,5 ցենտներ, գարի՝ կոլխոզում 12,0 ցենտ., անհատներ 8,7 ցենտներ գարի կոլխոզում 12,5 ցենտ., անհատներում 11,0 ցենտներ և այլն բալով յեգիպտացորեն կոլխոզում 5 անհատներում 4,3, արևածաղիկ կոլխոզում 4,5 անհատներում 4 և այլն։

Բերքատվության գնահատականները հեռագրով հաղորդելու վերոհիշյալ ձևը կիրառում են նաև սովխոզները և ՄՏԿ-ները, ընդ վորում սովխոզը հաղորդում է սովխոզի բերքի գնահատականները՝ իսկ ՄՏԿ իր կողմից սպասարկվող կոլխոզների բերքի դրության վերաբերյալ։

ՀՍԽՀ Հողժողկոմատի հաշվառման սեկտոր

25/IV 1934 թ.

Շրջգործկոմի տպարան Վաղարշապատ, Գլավլիտ 336 Պատվեր 57 Տիրաժ 1100